«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն,կոնֆլիկտներ

Առարկան՝ ***Հասարակագիտություն***

Հետազոտող ուսուցիչ՝ Լարիսա Ղարախանյան

Ուսումնական հաստատություն՝ Դիմիտրովի միջնակարգ դպրոց

Երևան 2023

Հետազոտական աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն	
Հետազոտությունն իրականացնող ուսուցչի տվյալներ	
Անուն, ազգանուն	Լարիսա Ղարախանյան
Աշխատավայրը(դպրոցի լրիվ անվանումը)	Դիմիտրովի միջնակարգ դպրոց
Մասնագիտություն	Ուսուցչուհի
Հեռախոսահամար	094-39-70-30
Էլ. հասցե	lara.gharaxanyan.64@mail.ru
Դասավանդվող առարկա (առարկաներ)	Հասարակագիտություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

ԳԼՈՒԽ 1 ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

1.1.ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 3

ԳԼՈՒԽ 2
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

Ներածություն

Ընտանիքը ամուսնության կամ ազգակցության վրա հիմնված մարդկանց փոքր խումբ է, որի անդամները միմյանց հետ կապված են կենցաղի ընդհանրությամբ, փոխադարձ օգնությամբ և բարոյական պատասխանատվությամբ: Որպես սոցիալական երևույթ, ընտանիքը փոխվում է հասարակության տնտեսական հիմքի զարգացմանը համապատասխան՝ պահպանելով հարաբերական ինքնուրույնություն:

Ընտանիքը պետության հոգատարությամբ շրջապատված հասարակական մի բջիջ է, որը զուգակցում է մարդկանց անձնական շահերը և նպաստում հասարակարգի և պետության կայունությանը: Ներկա ժամանակաշրջանում պետությունը շահագրգռված է ստեղծել ամուր, համերաշխ ընտանիք, քանի որ ընտանիքի կայունությունը նպաստում է հասարակարգի և պետության կայունացմանը:

Ընտանիքը միայն ամուսնական, ազգակցական կապերով, ընդհանուր հոգևոր և նյութական շահերով կապված անձանց միությունն է: Ընտանիքը հասարակության մի մասնիկն է:

Ընտանիքի կարևորագույն մասերից է օրենսդրությունը: Օրենսդրության մեջ գոյություն ունի ընտանեկան իրավունք, որտեղ օրենքը որոշում է ընտանիքում կնոջ, ամուսնու, երեխաների և ծնողների դերը, իրավունքներն ու պարտականությունները: Ընտանեկան օրենսգրքով ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմիններում արձանագրված ամուսնությունը: Եկեղեցական ամուսնությունները պետության կողմից չեն ճանաչվում:

Ընտանիքը, որպես հասարակական կարևորագույն սոցիալական ինստիտուտ, տարբերվում է սովորական սոցիալական խմբերից: Ընտանիքում գոյություն ունեն հոր, մոր և զավակների կարգավիճակներ, դերեր, իրավունքներ ու պարտականություններ: Ընտանիքի կայացման համար մեծ նշանակություն ունի երիտասարդ սերնդի նախապատրաստումը ամուսնական կյանքին:

Ամուսնության ամրության և ընտանիքի արդյունավետ գործառման անհատական պահանջմունքների դերի կարևորությունը ստիպում է, որպեսզի ընտանիքի հոգեբանական հետազոտության ընթացքում մշտապես ուշադրության կենտրոնում պահենք ընտանիքի անդամների պահանջմունքների խնդիրը: Շատ դեպքերում, խնդրի արդյունավետ լուծման համար ամուսնական կամ ընտանեկան պահանջմունքները դասակարգվում են:

Ընտանեկան միջավայրի ազդեցության միջոց է ընտանիքի անդամների խոսքը: Ընտանիքում թե՛ կրտսեր, թե՛ ավագ անդամները հաղորդում են իրենց տպավորությունները տեսածի և լսածի վերաբերյալ, պատմում իրենց աշխատանքային գործունեության և շրջապատի կյանքի կարևոր դեպքերի մասին: Խոսքի օգնությամբ քննարկվում են բազմազան հարցեր, ծնողները երեխաներին տալիս են խորհուրդ, բացատրություն:

ԳԼՈՒԽ 1

ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐ

Յուրաքանչյուր անձի ձևավորման, ֆիզիկական և մտավոր զարգացման գործընթացում ընտանիքը, ծնողներն ունեն անփոխարինելի դեր: Այս միջավայրում է տեղի ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, ձևավորվում դերային և վարքագծային կարծրատիպերը, արժեքային կողմնորոշումներն ու աշխարհայացքը: Առաջին հերթին ընտանիքն է հոգտանում երեխայի անվտանգության, կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, հոգեբանական աջակցություն ու հարմարավետություն ապահովում: Հետևաբար՝ բարդույթներից զերծ, հոգեբանորեն կայուն, հասարակության պահանջներն ընկալող և դրանց համարժեք արձագանքելու ունակ անձի ձևավորման ա-ռաջնային նախադրյալը բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ու հոգեբանական և սոցիալական խնդիրները հաղթահարելու կարողութ յուններ ունեցող, դաստիարակչական և սոցիալականացման գործառույթներ իրականացնող, երեխայի իրավունքները, նրա հանդեպ պարտականությունները գիտակցող և դրանք կյանքի կոչող ընտանիքի առկայությունն է: Ազնվությունը, մարդասիրությունը, բարությունը, կենցաղային խնդիրներին դիմագրավելու կարողությունը ձևավորվում են միայն այն դեպքում, երբ երեխան մանկուց ականատես է եղել անկեղծ ու ջերմ մարդկային հարաբերությունների, ինչն ակնկալվում է ընտանիքում:

Իսկ ընտանիքում առկա սոցիալ-տնտեսական և հատկապես հոգեբանական բնույթի խնդիրները՝ ծնողների անտարբերությունը միմյանց և երեխաների նկատմամբ, ձևական բնույթ կրող՝ «հանուն երեխայի» հարաբերությունները, հաճախակի կրկնվող վիճաբանությունները, հանդուրժողականության պակասով պայմանավորված՝ «սերունդների կոնֆլիկտը», բռնությունը հանգեցնում են անչափահասի կողմից շեղվող, իսկ առանձին դեպքերում՝ հանցավոր վարքագծի դրսևորման:

Պատահական չէ, որ երեխայի իրավունքների պաշտպանությանը միտված

միջազգային փաստաթղթերում ևս կարևորվում է ընտանիքի դերը։

Ընտանիքը, և հատկապես երեխան, մեր հասարակության մեջ մշտապես դիտվել են որպես բարձրագույն արժեք։ Սակայն ՀՀ-ում ընթացող ճգնաժամային երևույթները չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել նաև սոցիալական այս ինստիտուտի վրա. աղքատությունը, գործազրկությունը, արտագաղթը, ժողովրդագրական բացասական փոփոխությունները, արտագնա աշխատանքի մեկնելու հետևանքով առաջացած կիսատ ընտանիքները, արժեքային անոմիայով պայմանավորված՝ բարոյական մի շարք նորմերի անտեսումը հանգեցրին հասարակության մի մասի, հատկապես երիտասարդների շրջանում ընտանիքի ինստիտուտի արժեզրկման։

1.1.Ընտանեկան կոնֆլիկտներ նկարագիրը

Ժամանակակից ընտանիքներում ծնողները երեխաների դաստիարակության հարցերում հանդիպում են մի շարք խոչընդոտների՝ ժամանակակից ծնողների զբաղվածությունը, նրանց ցածր կրթական մակարդակը, թույլ հիմքերի վրա դրված ընտանեկան արժեքները, ընտանեկան դաստիարակության մասին մասնագիտական գիտելիքների, կարողությունների պակասը, դաստիարակության մեթոդներին չտիրապետելը։ Այս առումով կարևորվում է ընտանիքի և դպրոցի փոխգործակցությունը, որն ապահովում է ծնողներին մասնագիտական աջակցություն ցուցաբերելը և ընտանեկան դաստիարակության գործընթացին օժանդակելը։

Առհասարակ, դաստիարակչական ներգործությունների արդյունավետությունը կախված է ծնողների միջև առկա փոխհարաբերություններից, ընտանիքի կյանքի ձևից, «առողջությունից», նրա երջանիկ մթնոլորտից։

Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, ենթարկվում,հարմարվում է համապատասխան սոցիալական միջավայրին, հասարակության պահանջներին, ազդեցություններին, իրականությանը :

Երեխան ծնվելով ընկնում է իր համար բոլորովին այլ՝ դժվարություններով

լի մի աշխարհ, որտեղ նրա հիմնական ու առաջին սյունը ընտանիքն է: Երեխան, աչքերը բացելով, տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունները, որոնք նույնիսկ կարող են չգիտակցվել, առանձնահատուկ նշանակություն ունեն աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտությունների համաձայն, այն աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում, ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերումներ և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ: Նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, սիրով են հաճախում դպրոց և ունեն հավատ սեփական ուժի և հնարավորությունների նկատմամբ:

Միևնույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:

Ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպե՞ս կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»: «Ծնողների ներգրավվածություն» հասկացությունընշանակում է դպրոցի հետ միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման որակի նկատմամբ ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այդ պատասխանատվությունը միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը: «Ծնողներիներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

Ընտանիքը մարդկանց կայուն սոցիալական հանրություն է, որն ունի բազմաթիվ տարիների պատմություն: Այն հասարակության տարր է հանդիսանում և կատարում է շատ կարևորագույն խնդիր՝ բնակչության թվի աճ, բազմացում: Դրա յուրահատկությունը կայանում է նրանում, որ մի քանի մարդ (մարդկանց խումբ) ամենասերտ փոխազդեցություն են ունենում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նմանատիպ ինտենսիվ փոխազդեցության համակարգում անհնար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների և ճգնաժամերի: Վերջին ժամանակներում ընտանեկան հարաբերություններն էական փոփոխությունների են ենթարկվել: Ավելացել է բջջային (ամուսիններից և երեխաներից կազմված) ընտանիքների թիվը: Փոխվել են ընտանիքում ամուսինների ֆունկցիաները, նրանց արժեհամակարգը, վերաբերմունքը երեխաների նկատմամբ, դաստիարակության մեթոդները: Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա:

Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ:

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Գոյություն ունի «կոնֆլիկտ» հասկացության մի քանի սահմանում: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ»[1]:

Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ կոնֆլիկտը անհատների անհամատեղելի

[1] Ребус Б.М. Психологические основы управления школой. – Ставрополь. : СГПИ. 1990, с. – 45.

նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է»[2]:

Ի տարբերություն Ռեբուսի և Սերգեյչուկի՝ Ա.Մ.Ստոլյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն. Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով»[3]:

Ըստ վիճակագրական տվյալների՝ ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է:

Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն:

Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն:

Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել ընտանեկան կյանքում առաջացող կոնֆլիկտների 4 տեսակ.

1. Ներանձնային- պետք է նշել, որ այն մարդը, որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը: Արդյունքում տեղի է ունենում հոգեբանական ճնշում և հնարավոր է ներանձնային կոնֆլիկտը վերափոխվի միջանձնային կոնֆլիկտի:

2. Միջանձնային- կոնֆլիկտը ծագում է 2 կամ ավելի մարդկանց միջև: Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հակադրությունների լուծման ժամանակ: Նման կոնֆլիկտի

[2] Сергейчук А.В. Социология управления. - СПб.: Бизнес-пресс, 2002, с. – 212.

[3] Столяренко А.М. Общая и профессиональная психология. - М.: ЮНИТИ-ДАНА, 2003, с. – 294.

լուծումը կախված է մարդկանց զարգացման մակարդակից։

3. Անհատական-խմբային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ անհատաի նպատակը, վարքը չի համապատասխանում խմբի նորմերին։

4. Միջխմբային կոնֆլիկտ-այս դեպքում կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի նպատակների, վարքի միջև։ Կոնֆլիկտային գործունեության հիրմքում ընկած են՝

ա) գործունեության բնույթը (հարձակվողական, պաշտպանողական, չեզոք),

բ) ակտիվության կոնֆլիկտներ (սիրո կորուստ, կապվածություն, կոպտություն, խանդը, կյանքին տարբեր հայացքներով նայելը),

գ) ներքին կոնֆլիկտ (դավաճանություն, մեկ այլ մարդու հանդեպ նոր զգացում)։

Ընտանեկան կյանքը մի ամբողջ գիտություն է, որը շատ բարդ է և անընդհատ զարգացող, քանի որ երկու ճակատագրեր միացել են և դարձել ընդհանուր երկու աշխարհներ։ Անհրաժեշտ է ապրել ընդհանուր հոգսերով, հաջողություններով։

Ընտանիքի յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում։ Նման ինտեսիվ փոխազդեցության համակարգում դժվար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների և ճգնաժամերի։ Ընտանիք կազմելուց հետո սկսվում է ամուսնական առօրյան իր հոգսերով։ Ամուսինների միջև կարող են առաջանալ նաև հակասություններ, կոնֆլիկտներ, որոնք առաջ են բերում ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերություններ։ Այդ կոնֆլիկտները կարող են վերաբերվել ամուսնական կյանքի տարբեր կողմերին, դրամին, հետաքրքրություններին, բարեկամներին, ազգականներին, երեխաներին և այլն։ Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև։ Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայքար՝ հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի։ Օրինակ, ծնողի և երեխայի միջև որոշակի պայքար է առաջանում, թե տարբեր խնդիրների շուրջ ով է վճիռ կայացնելու։

Միջամուսնական կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական է դառնում հետևյալ պայմանների առկայության դեպքում կամ հետևյալ պատճառներով.

1. սեփական ես-ի նշանակալիության, կարևորության պահանջմունքի, չբավարարվածության, ամուսիններից մեկի սոցիալական դիրքի ցածրացում,
2. դրական հույզերի, պահանջմունքի, չբավարարվածության, քնքշանքի հասկանալու և փոխըմբռնման բացակայության և այլն,
3. ցածր կրթամակարդակ,
4. աշխատանքի բացակայություն և ֆինանսական դժվարություններ,
5. կախվածություն ծնողների ընտանիքներից:

Ամուսնական կոնֆլիկտները հաճախ առաջանում են զույգերի ֆիզիկական և հոգեբանական անհամատեղելիության պատճառով: Հոգեբանական համատեղելիությունը պայմանավորված է ամուսինների խառնվածքի տիպով և բնավորության գծերով: Որքան ամուսինները նման են իրար բնավորությամբ և խառնվածքով, այնքան ավելի շատ են նյարդայնացնում և հոգնեցնում միմյանց: Ներդաշնակ զույգ կարող են լինել, օրինակ, սանգվինիկ ամուսինն ու մելանխոլիկ կինը:

Ֆիզիկական համատեղելիությունը պայմանավորված է կնոջ և տղամարդու օրգանիզմի կառուցվածքով, սեռական օրգանների առանձնահատկություններով, որոնք էական նշանակություն ունեն սեռական կյանքում: Արդեն ապացուցված է, որ սեռական անբավարարվածությունը, ինտիմ կյանքում առկա խնդիրներն առաջացնում են սառնություն ու անտարբերություն կին-տղամարդ հարաբերություններում:

Ընտանիք կազմելիս հարկավոր է հաշվի առնել նաև այն, որ տղամարդկանց օրգանիզմի վերջնական ձևավորումը տեղի է ունենում 25 տարեկանում, իսկ կանանց օրգանիզմի վերջնական ձևավորումը՝ 18-20 տարեկանում: Բացի այդ, տղամարդկանց սեռական հակումն ավելի երկար է պահպանվում, քան կանանց: Ուստի, կենսաբանական տեսանկյունից ցանկալի է, որ զույգ կազմելիս տղամարդը լինի տարիքով ավելի մեծ, որպեսզի սեռական կյանքում լինի ներդաշնակություն :

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լոկ ֆինանսի աղբյուր դիտարկվելն է: Այն միտքը,

որ ընտանիքի անդամները ֆինանսապես տղամարդուց կախվածության մեջ են, սկսում է ճնշել և բացասաբար անդրադառնալ նրա հոգեկանի վրա: Արդյունքում թուլանում է նրա կապը նախ կնոջ, ապա երեխաների հետ:

Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են.

- նևրոտիկ ընտանիքներ, որտեղ զույգի մոտ նկատվում են տագնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն,
- ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրութ-յունները, հակված չեն փոխզիջման,
- պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում:

Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ): Նման ընտանիքները հիմնականում լինում են քրեածին, կոնֆլիկտածին, ամբարենպաստ ընտանքիներ:

Վեճերի ժամանակ գլխուղեղի կեղևում առաջանում է օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահռելի ու ավելի կետերի տարածք:

Այս դեպքում մարդը կորցնում է ինքնատիրապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն՝ անհատականը:

Մարդը աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավորության որևիցե պահանջմունքի չբավարարված լինելն է՝ սկսած ֆիզիկական, կենսաբանական,ֆիզիոլոգիականից մինչև հոգևոր պահանջմունքները:

Կոնֆլիկտների մեխանիզմը հասկանալու համար անհրաժեշտ է առանձնացնելպատկերացումների 3 համակարգ՝

1. էգոցենտրիկ համակարգ - որի հիմքում ընկած է սեփական «Ես»-ը: Այլ

մարդիկ կամ առարկաները հանդես են գալիս որպես կա՛մ օգտակար գործիք, կա՛մ խոչընդոտ:

2. Այլետորոցենտրիկ համակարգ - կենտրոնում ընկած է ուրիշը:

3. Սոցիոցենտրիկ - հիմքում ըմկած է մեկը:

Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝

1. Միմյանց հարմարվելու փուլ՝ամուսնական կյանքի առաջի տարին է, երբ ձևավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:

2. Երեխա ունենալու փուլ. երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական հոբբիին: Կնոջ հոգնածության պատճառով, կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավորապես սեռական ակտիվությունը նվազում է:

3. Բախման փուլ. երեխաների դաստիրակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:

4. Միապաղաղության կամ միջին ամուսնական տարիքի փուլ. այս շրջանը երբեմն անվանում են նաև զգացմունքների հագեցվածության փուլ կամ քաղցի շրջան:

5. Իվոլուցիոն կամ միայնակության զգացման փուլ: Այս շրջանը սկսվում է 18-ից 24տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է իվոլուցիոն շրջանի հետ: Կարող է ձեւավորվել միայնակության զգացում՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն:

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսեւորվում է տարաձայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսեւորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը:

Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, պայմանավորված են սոցիալական գործոններով:

Նշենք նաև, որ ընտանեկան վեճերի «ամենաթեժ» պատճառը ամուսիններից

մեկի խանդն է: Իրավիճակը բարդանում է նրանով, որ եթե անգամ «մեղավոր կողմը» ոչ մի առիթ չի տվել, դա ոչ մի բան չի փոխում: Բոլոր փաստարկներն անտեսվում են, քանի որ խանդը զգացմունքի հիվանդագին արտահայտում է «անխառն» վիճակում, երբ բանականության փաստարկները չեն աշխատում:

Մյուս ակնհայտ պատճառը, այսպես կոչված, «ուղեղի լուսավորումն» է, որը գործում է հատկապես երիտասարդ ընտանիքներում: Երբ համատեղ կյանքի ռոմանտիկ շրջանն ավարտվում է, (միջինը 1-ից 3 տարի հետո) կողակցի թերություններին համակերպվել բոլորը չեն կարողանում: Հաճախ բացահայտում են, որ կիրքը՝ կիրք, բայց ստացած դաստիարակության, կրթության տարբերությունը, չհամընկնող կենսական արժեքները, մասնագիտական կայացածության հարցը և այլ խնդիրներ պարարտ հող են դառնում ներքին չարացածության համար, ինչը հանգեցնում է բացահայտ կոնֆլիկտների: Ուստի, երբ ներքին լարվածությունը գերհասունանում է այն մտքից, որ կողակիցը համատեղ կյանքում ամենևին էլ այնպիսին չէ, ինչպիսին պատկերացնում էիք, սկսկվում են մանր խայթոցները, որոնք սովորաբար արագ վերաճում են լուրջ վիճաբանությունների:

Բացի այդ՝ կյանքի կենցաղային կողմից չես փախչի, իսկ նյութական ապահովությունը, տան պայմաններն ու հարմարավետությունը իսկապես կարևորագույն դեր են խաղում: Դժբախտաբար, ժամանակակից ընտանիքների մեծ մասը չի կարող պնդել, թե զոհ է նյութական վիճակից: Իսկ երբ ստիպված եք լինում վարձած մի տնից մյուսը տեղափոխվել, վճարել ապառիկ ապրանքների՝ կարծես չսպառվող տոկոսները, երբ բնակարանում 20 տարի շարունակ վերանորոգում չի իրականացվել, իսկ խորհրդային տարիներին գնված կահույքն սկսել է քանդվել, վեճ ու կռիվներն անխուսափելի են:

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը , կարելի է ասել, որ ընտանիքը բաց համակարգ է, որը կազմված է ենթահամակարգերից, և, որպես ենթահամակարգ, մտնում է այլ համակարգի (հասարակություն) կազմի մեջ:

Ընտանիքի անդամները սովորաբար միմյանց հետ կապված են զգացմունքային կապերով, միմյանց նկատմամբ զգում են փոխադարձ պատասխանատվություն: Ընտանիքը նաև սոցիալական ինստիտուտ է, այսինքն՝ մարդկանց փոխհարաբերությունների կայուն ձև, որի շրջանակներում իրականացվում է մարդկանց

առօրյա կյանքի հիմնական մասը՝ սեռական հարաբերություններ, մանկածնություն և երեխաների սկզբնական սոցիալականացում, կենցաղային խնամքի, կրթական և բժշկական սպասարկման նշանակալի մասը և այլն:

Ընտանիքի յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև:

Ամուսնական կոնֆլիկտների առաջացման մյուս հաճախակի հանդիպող պատճառը տղամարդու՝ որպես լոկ ֆինանսի աղբյուր դիտարկվելն է: Բոլոր ժամանակներում էլ ընտանիքում տարբեր պատճառներով ծագել են կոնֆլիկտներ: Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Ընտանեկան կոնֆլիկտների հիմքում ընկած է ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մեր հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել մանկավարժական կոլեկտիվի, ծնողների և երեխաների փոխգործակցության և փոխհարաբերությունների վիճակը ժամանակակից հանրակրթական դպրոցում:

Հետազոտության ընթացքում կազմել ենք հարցաթերթիկ՝ ծնողների, աշակերտների և ուսուցիչների համար: Մեր ուսումնասիրություններըցույց տվեցին, որ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ-ծնող-աշակերտ համագործակցության արդյունավետությունը պայմանավորված է ընտանիքում ծնողների և երեխաների փոխհարաբերություններով և դպրոց-ընտանիք փոխգործակցության ձևերով: Այդ մասին են վկայում ծնողների, ուսուցիչների և աշակերտի շրջանում մեր կողմից անցկացված սոցհարցումների արդյունքները:

Հարցաշարերի պատասխանները ցույց տվեցին, որ վերջին շրջանում զգալիորեն իջել է ծնողների հետ երեխաների շփման ու համատեղ գործերի իրականացման մակարդակը: Դա առաջին հերթին բացատրվում է նրանով, որ այսօր երեխաները չափազանց կախված են համացանցից և ազատ ժամանակի մեծ մասն անցկացնում են համակարգչի առջև և տարված են համակարգչային խաղերով: Այս կախվածությունը հասել է այն աստիճանի, որ նրանցից շատերը խուսափում են ընկերների հետ խաղալուց, բակային խաղերից: Երկրորդ պատճառը ծնողների ու երեխաների համատեղ հետաքրքրությունների, հանգստի, ստեղծագործական գործունեության, ինչպես նաև արժեքային կողմնորոշումների, կենսանպատակների չհամընկնումն է: Երրորդ պատճառը դպրոցի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքների՝ ծնողական ժողովների, մանկավարժական խորհրդատվության, սովորողների ազատ ժամանցի կազմակերպման, ուսումնաճանաչողական գործունեության արդյունավետության հսկման պլանավորման բացակայությունն է:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ աշխատանքային օրերին երեխաների հետ ծնողների մեծ մասի շփումը կայանում է դասապատրաստման և տնային առաջադրանքների վերահսկողության ընթացքում: Այդ գործընթացը մեծ մասամբ հսկվում է մայրերի կողմից:

Միևնույն ժամանակ հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ծնողները ուշադրություն չեն դարձնում երեխաների բնապահպանական, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, իրավական, սեռական դաստիարակությանը, իսկ երեխաների հետ տարվող զրույցները մեծ մասամբ վերաբերում են տնային աշխատանքների կատարմանը, առարկայական լրացուցիչ պարապմունքներին, ուսման առաջադիմությանը, բարեկամներին,համակարգչային խաղերին:

Հետազոտությունները ցույց տվեցին, որ աշխատանքային օրերին երեխաների հետ ծնողների մեծ մասի շփումը կայանում է դասապատրաստման և տնային առաջադրանքների վերահսկողության ընթացքում: Այդ գործընթացը մեծ մասամբ հսկվում է մայրերի կողմից:

Հարցման արդյունքում պարզվեց նաև, որ ժամանակակից հայ ընտանիքում երեխաների և ծնողների փոխգործակցությունը հիմնականում իրականացվում է ծնողների խորհրդատվության ձևով՝ մասնավորապես մասնագիտական կողմնորոշման, ընկերների ընտրության, անհատական պարապմունքների ուղղությամբ:

Հարցմանը մասնակցած երեխաների 42%-ը նշել են, որ ընդհանրապես չեն մասնակցում ընտանիքի կենցաղային գործերին:

Հարցման ենթարկված ծնողների միայն 48%-ն է ժամանակ տրամադրում իրենց երեխաներին, 51%-ը օգնում են երեխաներին դասապատրաստման գործում, 62%-ը նշել են, որ խնդիրներ չունեն իրենց երեխաների հետ հարաբերություններում: Ծնողների 53%-ն է նշել, որ քննարկում է ուսուցիչների և ընկերների հետ իրենց երեխաների փոխհարաբերությունները, 38%-ը նշել է, որ երեխայի հետ միասին կատարում են կենցաղային աշխատանքներ, իսկ միասին ժամանցի կենտրոններ այցելում են ծնողների 30%-ը:

Արդյունքները ներկայացված են թիվ 1 տրամագրում:


70
60
50
40
30
20
10
0
62%
26%
12%
42%
22%
25%
62%
10%
28%
55%
21%
24%
58%
20%
22%
65%
10%
15%
Հարց 1
Հարց 2
Հարց 3
Հարց 4
Հարց 5
Հարց 6
այո
ոչ այնքան
ոչ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով «Ընտանիքի և դպրոցի փոխգործակցությունը որպես ընտանեկան դաստիարակության արդյունավետության միջոց» խորագրով հետազոտական աշխատանքը՝ եկանք հետևյալ եզրահանգման՝

1. Ժամանակակից ընտանիքներում երեխաների ընտանեկան դաստիարակության վրա ազդում են հետևյալ գործոնները՝ ծնողների զբաղվածությունը, նրանց ցածր կրթական մակարդակը, թույլ հիմքերի վրա դրված ընտանեկան արժեքները, ընտանեկան դաստիարակության մասին մասնագիտական գիտելիքների, կարողությունների պակասը, երեխաների կյանքի մասին ինֆորմացիայի պակասը, ոչ բավարար վերահսկողությունը:

- Դպրոց-ընտանիք փոխգործակցության արդյունավետությունը պայմանավորված է՝ գործունեության նպատակների որոշակիացմամբ,
- համատեղ աշխատանքի պլանավորումով,
- ուժերի և միջոցների համատեղ բաշխմամբ,
- աշխատանքի համատեղ հսկողությամբ և գնահատմամբ,
- ծագած հակասությունների համատեղ հաղթահարմամբ:

2. Ընտանեկան դաստիարակությունը արդյունավետ կլինի, եթե կիրառվեն դպրոց-ընտանիք փոխգործակցության հետևյալ ձևերը՝

- ծնողների մանկավարժական լուսավորության կազմակերպում,
- մանկավարժական թեմաներով սեմինարների, խորհրդատվությունների կազմակերպում,
- ընտանեկան դաստիարակության վերաբերյալ գիտաժողովներին, կլոր սեղաններին ծնողների մասնակցություն,
- ծնողների ակտիվ ներգրավում դպրոցի արտադասարանական նդաստիարակչական միջոցառումներին:

3. Դպրոց-ընտանիք փոխգործակցության ժամանակակից ձևերից են նաև դասղեկ-ծնող համատեղ ջանքերով պլանավորված դասղեկի ժամերը, որոնք նպաստում են ընտանեկան դաստիարակության արդյունավետությանը, մասնավորապես ծնողի

կողմից իր երեխային կոլեկտիվում, դասապրոցեսի ժամանակ դիտարկելուն, երեխային ավելի լավ ճանաչելուն և այլն:

5. Դպրոց-ընտանիք փոխգործակցության ժամանակակից ձևերից է նաև առցանց ծնողական ժողովը, որն ապահովում է գրեթե բոլոր ծնողներիմասնակցությունը՝ անկախ այն հանգամանքից, թե որտեղ է գտնվում ծնողը՝ երկրում է, թե բացակայում է, աշխատավայրում է, թե տանը: Այն ժողովին միաժամանակ մասնակցելու հնարավորություն է տալիս երեխայի և՛ մորը, և՛ հորը: Վերը նշված հեռավար ժողովների կազմակերպման համար այսօր առավել գործածական են zoom, Microsoft teams հարթակները:

6. Դպրոց-ընտանիք փոխգործակցության ժամանակակից ձև է նաև ծնողների մասնակցությունը աշակերտների ուսումնական գործունեությանը՝ առանձին համա-տեղ խմբակային պարապմունքների անցկացում, առարկայական թեմատիկ երեկոների կազմակերպում և անցկացում, մասնակցություն վահանակների ձևավորմանը, դիդակտիկ պարագաների պատրաստում, դպրոցականների ուսուցում, ուսումնական թեմատիկ էքսկուրսիաների կազմակերպում ու անցկացում, ուսումնական կաբինետների ձևավորում դպրոցականների օգնությամբ, լրացուցիչ պարապմունքների անցկացում թույլ սովորող աշակերտների հետ, զեկուցումներ, հաղորդումներ սովորողների խմբի առջև, գիտահանրամատչելի, ուսումնական ֆիլմերի դիտում, դրանց քննարկում, ընտանիք-դպրոց համատեղ պլանավորված բարեգործական, կամավորական աշխատանքներ:

7. Ուսումնասիրությունները հիմք են տալիս փաստելու, որ դպրոցի, ընտանիքի և երեխաների համագործակցության դրական բնութագրերը կարող են փոխվել և արդյունավետ դառնալ, եթե այդ փոխգործակցությունը կազմակերպվում է համատեղ ստեղծագործական գործընթացում՝ հաշվի առնելով դպրոցի, համայնքի ընդհանուր և կոնկրետ առանձնահատկությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բորյան Ս.Գ., «Դպրոցի և ընտանիքի մանկավարժական ներգործության միասնությունը», Երևան, 1975թ.:
2. Եսայան Ա., Սոցիալական ուսմունք, սոցիալական աշխատանք, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2009, 620 էջ:
3. Էնգելս Ֆրիդրիխ, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Երևան, 1965:
4. Ինստիտուցիոնալ Սոցիալական աշխատանք, Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, ընդհանուր բնութագիրը, դասախոս՝ Մ.Յարմալոյան, 2015:
5. Սարգսյան Ա. Հ., Մշակույթի տեսություն, Երևան, 2003, 176 էջ:
6. Абдульханова – Славская К.А. Деятельность и психология личности. –М.: Наука, 1980. -335 с.
7. Байдельдинова Г.К. Семья и школа формируют человека. – Алок-Аты: Мектеп, 1984. 64 с.
8. Бородовская Н.В., Диалектика педагогического исследования, СПБ, 2001.
9. Гриценко Г.Д., Часовская Л.А., Подрастающее поколение как «группа риска» в современном российском обществе, Ставрополь, Исд., СГПИ, 2009, 145 с.
10. Дереклеева Н.И., Родительские собрания. 5-11 классы изд. 2-ое. –Москва, “ВАКО”, 2003. -271 с.
11. Морган Л. Г., Древнее общество или исследование линий человеческого прогресса от дикости через варварство к цивилизации // Материалы по этнографии. — Л.: Институт народов Севера ЦИК СССР, 1935, 373 с.
12. Ньюкомб Н., Развитие личности ребенка, Санкт-Петербург, 2003, 640 с.
13. Ожегов С.И., Словарь русского языка. –М.: Сов. Энцикл., 1981, -900 с.
14. Шипицына Л.М., Мамайчук И.И. Психилигия детей с нарушениями функций опорно-двигательного аппарата: Учеб. Пособие для студентов высш.учеб.зав.- 2004, 368 с.
15. Leslei G.R. Korman SH.k.: The Family in the Social Context, New York-Oxford 1989, էջ՝ 202:

16. Skolnick A.: The Intimate Enviroment Iexploring Marriage and Family, Boston, Little, Brown and company 1973, էջ՝ 114:
17. https://artsakhlife.wordpress.com/
18. www. Grandars.ru/socologiya/socologiya-dyukgema.html
19. Եսայան Ա., Սոցիալական ուսմունք, սոցիալական աշխատանք, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2009, 620 էջ:
20. Էնգելս Ֆրիդրիխ, «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը», Երևան, 1965:
21. Ինստիտուցիոնալ Սոցիալական աշխատանք, Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, ընդհանուր բնութագիրը, դասախոս՝ Մ.Յարմալոյան, 2015:
22. Սարգսյան Ա. Հ., Մշակույթի տեսություն, Երևան, 2003, 176 էջ:
23. Абдульханова – Славская К.А. Деятельность и психология личности. –М.: Наука, 1980. -335 с.
24. Байдельдинова Г.К. Семья и школа формируют человека. – Алок-Аты: Мектеп, 1984. 64 с.
25. Бородовская Н.В., Диалектика педагогического исследования, СПБ, 2001.
26. Гриценко Г.Д., Часовская Л.А., Подрастающее поколение как «группа риска» в современном российском обществе, Ставрополь, Исд., СГПИ, 2009, 145 с.
27. Дереклеева Н.И., Родительские собрания. 5-11 классы изд. 2-ое. –Москва, “ВАКО”, 2003. -271 с.
28. Морган Л. Г., Древнее общество или исследование линий человеческого прогресса от дикости через варварство к цивилизации // Материалы по этнографии. — Л.: Институт народов Севера ЦИК СССР, 1935, 373 с.
29. Ньюкомб Н., Развитие личности ребенка, Санкт-Петербург, 2003, 640 с.
30. Ожегов С.И., Словарь русского языка. –М.: Сов. Энцикл., 1981, -900 с.
31. Шипицына Л.М., Мамайчук И.И. Психилигия детей с нарушениями функций опорно-двигательного аппарата: Учеб. Пособие для студентов высш.учеб.зав.- 2004, 368 с.
32. Leslei G.R. Korman SH.k.: The Family in the Social Context, New York-Oxford 1989,

էջ՝ 202:

33. Skolnick A.: The Intimate Enviroment Iexploring Marriage and Family, Boston, Little, Brown and company 1973, էջ՝ 114:
34. https://artsakhlife.wordpress.com/
35. www. Grandars.ru/socologiya/socologiya-dyukgema.html
36. https://tatevghazaryan.wordpress.com/
37. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf